Տեսուչն ձեր. և զկնի երկարելոյ բանից յերկուց կողմանց ելեալ մեկնեցան Յոյնք 'ի վանս իւրեանց։ Այլ Թէոդորոս Պատրիարք գրեալ ծանոյց առ գլխաւորս ազգին 'ի Կոստանդինուպոլիս, լինել զգոյշ 'ի նենդութենէ և 'ի շողոքորդ բանից Յունաց. զի մի՛ խաբեալ 'ի նոցանէ՝ ստիպեսցեն զինքեանս վասն կանթեղացն։ Ապա յայտ առնէ Թէ Յոյնք որպիսի անարգական բանիւք նախատակոծ առնեն զմիաբանս և զուխտաւորս Հայոց՝ յամենայն տեղիս՝ համարելով զնոսա իբրեւ զգերիս եւ զստրուկս, ապա խնդրէ հոգ տանել և դարմանել զիրան և մեղմել զխրոխտանս Յունաց։

Դատաւոր քաղաքին լուեալ զայսոսիկ 'ի ծառայից իւրոց՝ առաքեաց զդպրապետն 'ի վանս Հայոց, եւ եհարց 'ի նոցանէ՝ թէ զի՞նչ է զոր լսեմն, ընդէ՞ր ոչ ազդ արարիք մեզ. եւ նոքա ասեն՝ ներեսցէ մեզ դատաւորն, զի չէր ինչ խնդիրն այնչափ կարեւոր, և երբեմն պատահին այսպիսի դէպք 'ի միջի մերում, եւ իբրեւ թեթեւ ինչ զանց արարաք։ Այլ դատաւորն դարձոյց անդրէն զդըպրապետն յղեալ ընդ նմա և զխոխանորդ իւր, ընթեռնուլ զվաւերական գրեանս և տեսանել զխորտակեալ կանթեղսրն, եւ ըստ այնմ տալ գիր, մի գուցէ ասէ, հասանիցի խնդիրն յականջս տերանց մերոց, եւ 'ի հարցանել նոցա զամսթի հարցուք իբրեւ զտգէտ ոք։ Իսկ Յոյնք յայտնի և ծածուկ խորհէին և խօսէին իսկ զրկել իսպառ զՀայս յեկեղեցւոյ Ս. Աստուածածնի, ուստի հարկ եղեւ Թէոդորոսի առաքել զհրովարտակն ընդ գրի դատաւորին 'ի Կոստանդինուպոլիս՝ և նորոգել զայն։ Եւ 'ի լինել բանից 'ի մէջ Հայոց և Յունաց սակս խնդրոյն 'ի թադաւորեալ քաղաքի անդ, գրեցին Պատրիարքունք փոխադարձ գիր յերուսաղէմ, զի զգիրն Յունաց առաքեաց Պատրիարքն Հայոց՝ և զՀայոցն Յոյնք։ Յետ ընթեռնլոյ զգրեանս, եկին դարձեալ Յոյնք 'ի վանս Հայոց և ասեն. փոխեսցուք ըզ-Տեսուչս և զլուսարարս, և եղիցի ամենայն ինչ ըստ առաջնոյն, այսինքն՝ բառնալ զերիս կանթեղսն, արդելուլ զաւելածութիւնն՝ և չմտանել 'ի գերեզման 'ի Կիւրակէի. այլ Հայք ոչ առին յանձն, պատուիրեսցուք ասեն երկոցունց եւս վարիլ սիրով ընդ միմեանս, եւ եթէ պատա-